

Լ. ՄԵԼԻՔԵԵՐ-ԲԵԿ

XVIII—XIX Դ.Դ. ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ԵՐԿԵՐԻ ՍԻ ՇԱՐՔ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎ Ս ՎՐԱՑԱՏԱՌ ԳՐՈՒԹՅԱՄԲ

(Նյութեր Թրիխտի հայոց բարբառի պատմության համար)

Վրացատառ-հայերեն ձեռագիր «անթողդիա»-ները, որ հասել են մեզ 18—19 դ. դ. հետաքրքրություն են ներկայացնում 2 տեսակետից. ա. ըստ բովանդակության՝ իբրև լրացումներ այլևայլ ձեռագրական հավաքածուներում առկա բաղմաթիվ երգարան-խաղարան-դանձարանների, հետևապես և իբրև նյութ ուղ միջնադարի հայոց բանաստեղծության և մասնավորապես աշուղական պոեզիայի ուսումնասիրության համար. և բ. ըստ լեզվի՝ իբրև հազվագյուտ հուշարձաններ վիրահայոց, մասնավորապես Թրիխտի բարբառի հետադոտություն համար:

Սայաթ-Նովայի ինքնագիր զավթարը (Երևանի Երական թանգարանում), նրա որդու՝ Իվան Սեիդովի ձեռագրատետրը (Լենինգրադի Արևելագիտության Ինստիտուտում) և Ստեփան Ալամզարովի ստվար ժողովածու-մատյանը (համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Կալիստրատի մոտ՝ Թրիխտում)¹ պատշաճորեն օգտագործելուց հետո հերթը, բնականաբար, հասնում է վրացատառ-հայերեն բանաստեղծությունների այն, եթե կարելի է այսպես ասել, ջուխտ ու կենտ օրինակներին, որոնք՝ առկա լինելով վրացական ձեռագրական հավաքածուներում, առաջին հերթին, ի հարկե, Վրաց մեջ գրադիտություն տարածող նախկին ընկերության ֆոնդում (այժմ Վրաստանի պետական թանգարանի ձեռագրերի բաժանմունքում մուծված) անմատչելի են հայ դրականության պատմության և հայ բարբառագիտության զրադվող մասնաղետներին:

Այսպիսի ձեռագրերն են № 1576 ա, 3683 և 3723, որոնք վաղուց ցուցակագրված են պրոֆ. Լ. Թաղայշվիլու հայտնի աշխատության մեջ² և որոնցից մեկը՝ (№ 3683) մենք երկիցս օգտագործել ենք մի այլ առիթով՝ Բոլորը XVIII դարու վերջերին և XIX սկզբներին են պատկանում:

¹ Վերջինիս մասին տես Լ. Մելիքեև-Բեկ. Նորագյուտ վրացատառ-հայերեն ժողովածուն և XVIII—XIX դ.դ. աշուղական անձանոթ խաղերը. «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Դիտ. Ակադեմիայի», 1944 թ. № 3, էջ 31—41: Նույնի՝ Հայ-վրացական գրական փոխհարաբերությանց հազվագյուտ հուշարձանը (վրացերեն, ռուսերեն և եղյուսեղով). «Ստալինի անվան Թրիխտի պետհամալսարանի աշխատություններ», հատոր XXVI բ, 1944 թ., էջ 191—200:

² Ե. Такайшвили, Описание рукописей „Общества распространения грамотности среди грузинского населения“, т. II, в. 1—4, Тифлис, 1906—1912, стр. 368—369 (№ 3683), 457 (№ 3723) և 348 (№ 1576).

³ Լ. Մելիքեև-Բեկ, Սայաթ-Նովա (վրացերեն), Թրիխտի, 1930, էջ 100: Նույնի՝ Սայաթ-Նովայի և Նոնաթանի երգերի նոր վարիանտներից. «Գրուխտար», 1936 թ. № 3:

3. Մատուցիմ ունիս գումարուք մատանի, [7. չի՞նք տեքստի]
 Բոյիք նման ոսկե շանդանի.
 Դու փարսի զըբուն նա միդանի
 Իք բուսա բղե, զալում, զալում.
 Խիստ լավ խրատ է, աման, աման:
4. Մուցրտ ախրյուր է, էրկու լուլա, []
 Վրացու բոլոր գինու կուլա.
 Բմ աչկիցս արտասով կուլա.
 Կանչում իմ հարա, զալում, զալում.
 Ինձ մեռնամ արա, աման, աման:
5. Յարար էտ ինչպես դադաստան է, [9]
 Կամ գիվանս արա կամ սպանե.
 Թե լվուր հ[ե]թիմ իս, ցավս հանե.
 Ֆողիս կու հանիս, զալում, զալում
 Խիլքու կու տանիս, աման, աման:
6. Բոլոր խալ ունիս, սիա[հ] ծամիր, [3]
 Մատնիրք թափած-ածած մումիր.
 Դու բու ձիռով թաս մի խմիր.
 [Յ]իս կու տամ զալում, զալում [զալում]:
 Մի ալ կու ծեամ, աման, աման:
7. Խաթաի գողիկ, հաալավք մավ, [6]
 Դախցր ծիծաղիս վուրպես կարաք.
 Ինձ շատ մի անիլ աչկով-ունքավ.
 Ֆողիս կորցցիր, զալում[մ], զալում,
 Մուրեցցիր, աման, աման:
8. Շարած մարբրիա է, յախալուխ, [8]
 Սիսամուր է, օրթալուխ.
 Նարինջի ատլաս, արխալուխ.
 Դու գ'իրմըղի գուլ, զալում, զալում.
 [Յ]իս շեյգա բուրբուլ, աման, աման:
9. Զիր բախումը ծաղիկ է շարած, [—]
 Անուշ հուտեն խիլքս է տարած.
 Մնացիլ իմ ախպես պաշարած.
 Յարար ում դնամ, զալում, զալում:
 Այս կու զարմանամ, զալում, զալում:
10. Ասիլ իս՝ Յոնաթամ Նազըշ է, [13]
 Գիգե ունքիրս, գ'ալամգ'աշ է.
 Ասա պատկիրս թարն քաշե.
 Քաշիլ իմ, զալում, զալում, [զալում],
 Մաշվիլ իմ, աման, աման, [աման]:

II

Սայաթ-Նովայի «Զիս ասում թե լմց իս էլի» խաղի վարիանտը գե-
 տեղված է նույն՝ № 3683 ձեռագրում, գուգընթաց վրացերեն «Շե սած-
 դալո, չեմո թավո, բա իքեն» երգին. մեկը, այսինքն հայերենը, ձախ սյու-
 նակում, իսկ մյուսը՝ վրացերենը՝ աջում. Նվ հենց այստեղ է, որ սյունակ-
 ների զլխում ամփոփված է մի հետաքրքիր հիշատակարան, ուր ասված է.
 «Սալաթնամիսդան նաթք» մի մուխամբաղի, այսինքն. «Սայաթ-Նովայի

ասված մուխամբադը. ապա փակադծի մեջ ավելացրած է. «Սոմեխթ տեր-տերա իդ՝ո պիրվել, խուլո շեմդդումադ ըերաթ ըոմ շեղդա, մաշին թքո»՝ այսինքն. «Նախ հայ տերտեր էր, իսկ երր կուսակրոն զարձավ, այն ժա-մանակ ասաց այս»:

Սայաթ-Նովայի «Զիս ասում թե լանց իս էլի» խաղի այս վարիանտը բավականին տարբերվում է հիմնական տեքստից: Մինչդեռ ընտղիբը պա-րունակում է 5 տուն՝ յուրաքանչյուրը 6 տողից բաղկացած, ընդամենը ուրեմն 30 տող, ուր յուրաքանչյուր տան վերջին տողը ամեն տեղ միատեսակ է կարդացվում՝ «Բարով տեսա, իմ սիրեկան», այս վարիանտը պարունակում է նմանապես 5 տուն, սակայն յուրաքանչյուրը 4 տողից բաղկացած, ընդա-մենը ուրեմն 20 տող:

Օղտվելով առիթից, որ մենք ընդօրինակած ունինք նույն խաղի մի այլ վարիանտ ևս, նույնպես վրացատառ ղրությամբ, որ տեղա է Համա-միութենական Դիտ. Ակադեմիայի Արևելագիտության Ինստիտուտի (նախ-կին Ասիական թանգարանի) Georgica հավաքածուի № 222՝ Իվան Սելիգովի (Սայաթ-Նովայի որդու) ինքնաղիբ մատյանում, մենք ղուղանոթաբար տա-լիս ենք և այդ վարիանտը, որ բաղկացած է 4 տունից, յուրաքանչյուրը 5 տող, ընդամենը 20 տող, ուր բաց է թողնված չորսընդ տունը ամբողջա-պես:

Ըստ Թբիլիսիի № 3683 ձեռագրի

1. Զիս [հ]արցնում, լաց իս էլի,
Բարով տեսանք, իմ սիրեկան,
Վարթի նման բաց իս էլի
Քարերով-խարերով:

2. [Թ]իս բիդամա շատ իմ լացի,
Արի, մե զարդս իմադի.
Օրս այսպես անր է կացի
Դարերով-զարերով:

3. Դուն [հ]արիլ իս ատլասե խաս,
Քու սիրողին կոնիս մաս-մաս.
Ծախթ պիտի յադութ-ալմաս
Շարերով-շարերով:

4. Քիդ կու գովինք խալի մեշն,
Շամսեիրա թաղի մեշն,
Շուռ իս դալի բաղի մեշն
Բարերով-յարերով:

Ըստ Լեոնիդադի № 222 ձեռագրի

1. Զիս ասում թե լաց իս էլի,
Բարով տեսանք, իմ սիրեկան,
Վարթի նման բաց իս էլի
Քարերով-խարերով.
Բարով տեսանք, իմ սիրեկան:

2. Արի, մե զարդս իմացի,
[Ծ]իս բիդամա շատ իմ լացի.
Օրս ա[յ]սպես անցուցցի
Դարերով-զարերով.
Բարով տեսանք, իմ սիրեկան:

3. Ինչ վախտ հաքնիս ալի ատլաս,
Տեսնողին կոնիս մաս-մաս.
Դոշիտ սլետք է լալ ու ալմաս
Շարերով-շարերով.
Բարով տեսանք, իմ սիրեկան:

¹ Տես՝ Կալմասորա, Լ, Կ. Կեկելիձեի և Ա. Բարամիձեի խմբագրությամբ (վրացերեն), Թբիլիսի, 1930, էջ 226:

² Հմմ. նաև Հ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա (վրացերեն), էջ 100. «Գրուկտար», 1930 թ. № 3:

3. Սառթնառն վունց զընջանա,
Անկիրն ոսկե փընջան ա.
Դուշմանի լիզուն մընջանա
Չարերով-չարերով:

4. Սայաթնովեն վ[ու]նց զ[ն]ջանա,
Անկիրն ոսկե փնջան ա.
Դուշմանի լիզուն մնջանա
Չարերով-չարերով.
Բարով տեսանք, իմ սիրեկան:

III

Թուրիցը հայտնի է իր «Ով, իմ սիրելի, մեկ մողըս արի» խաղով: Վերջինս, հորինված լինելով Թրիլիսի բարբառով, ամփոփված է նույն №3683 ձեռագրում՝ Սայաթ-Նովայի երգերից անմիջապես հետո և պարունակում է 5 տուն՝ յուրաքանչյուրը 4 տող, ընդամենը ուրեմն 20 տող (այս խաղի մի այլ տարբերակը տուները ետ և առաջ տես «Դնար հայկական»-ում, էջ 470—471):

Ըստ «Բնագրի»

1. Ով, իմ սիրելի, մեկ մո[ղ]ըս արի,
Հար զամ քու գուռտ, զալըս իմացի.
Նրկու անկեմես արուն է կաթում.
Փլխիս վայ տալով լալըս իմացի:

1. Ով իմ սիրելի մեկ մօտս արի՝
Հարդամ քու դուռն, դալս իմացի.
Նրկու աչքիցս արիւն է կաթըմ,
Փլխիս վայ տալով լալս իմացի:

Հերիք է, մուրվաթ արա,
Նար, հերիք է, մուրվաթ արա
Նահախ տեղան մի շարշարի,
Մեկ ուսմ արա եար քեզի դուրբան:

2. Նկ, մե բան արա, դանամ թիզ բազի
Ինքտ փիթր արա, թիզի ու թիզի.
Ն[հ]ախ տիղն ինծի մի տա ջազի,
Սրտիս միջն խալս իմացի:

2. Նկ մին բան արա ինեմ թեզ ուզի,
Ինչ նահախ տեղան եկ մի տալ ջազի
Ինքդ ֆիթր արա, եար, թեզ ու թեզի,
Սրտիս մեջի խալս իմացի:

Հերիք է և այլն:

3. Մեկ խավաթ օթախ, մեկ [յ]իս ու [յ]իս իմ
[հ]ամեցեթ մողս, յադիթ մե խոսիմ,
Բայց քեն հան, դարդիրս անդընիտ ասիմ.
Իմ քուր անբախտ, իզբալս իմացի:

3. Մեկ խավաթ օթադ, մեկ ես ու ես եմ,
Արի դու իմ մօտ, թեզ հետ մեկ խօսեմ,
Բացեմ դարդերս, ականջ դիր ասեմ,
Իմ քոռ անբաղդ եզբալս իմացի:

Հերիք է և այլն:

4. Սրտս-խալս դուն չիս իմանում,
Ն[հ]ախ տիղն ինչ էլ չուս իս սպանում.
Անկիս տակոփն մրտիկ իս անում,
Անմոռ[ն] ը բարով տալս իմացի:

4. Սրտիս դարդերն չուս չես իմանում,
Ինչ նահախ տեղան չուս ես սպանում.
Աչքիդ տակոփն մտիկ ես անում,
Անմոռն ը բարով տալս իմացի:

Հերիք է և այլն:

5. Էշիթ կրակն սրտումս վառ ա,
Հերթ ու ջիզարս դարիլ է յարա.
Աստված թե կու սիրիս, մե իլաջ արա,
Խեղճ-Թուրինջն ի մաս հալս իմացի:

5. Էշիթի կրակն սրտումս վառ ա,
Հերթ ու ջիզեարս դառելայ եարայ
Աստուածդ սիրես մեկ ըռանմ արա,
Խեղճ Թուրինջն եմ ես, հալս իմացի:

Հերիք է և այլն:

IV

Մինրան (Միրիան) Բագրատունի Վրաց արքայազնը 1791 թվի նոյեմբերի 1-ին՝ գտնվելով Աստրախանում՝ ականատես է լինում, թե ինչպես Իթիլ-Լ-գիլ գետը, որ նույն Վոլգան է, սառույցով է ծածկվում ու փնաս հասցնում այնտեղ եկած վաճառականներին, որոնց թվում և հայ պաղիրկյաններին, որոնք՝ հետն ունենալով իրենց ապրանքները ստիպված են լինում մի առ ժամանակ մնալ Աստրախանում։ Այս առթիվ Մինրան արքայազնը հորինել է վրացերեն լեզվով մի երգ-սատիրա՝ «Օչակովի առման» (1788) նվիրված խաղի եղանակով, որ բաղկացած է 8 տունից՝ յուրաքանչյուրը 4 տող, ընդամենը ուրեմն 32 տող, և այս երգը նույն XVIII դարու վերջում հայերենի է վերածել տեր-Պետրոս Տփղիսեցի հայ քահանան՝ Տփղիսի բարբառախառն գրաբարով, որ կցված է վրացերեն բնագրին։

Ահա այս երգը տեր-Պետրոսի թարգմանությամբ՝ ըստ № 3723 ձևագրի.—

1. Ո՞վ խոսե թե ի Աշտարխան
Լղիլու վիրա բնթանան
Ի մուտ նոյենրերի ամսյան
Ի սպառ համառյաց սառնություն տարածամ։
2. Աշտարխանա վաճառականք՝
Ազգին ուսաց թե հայկականք
Մարդիկ երկրավ օտարականք
Ի սպառ համառյաց {սառնություն տարածամ}։
3. Ծանապարհունք նավով ի ծովի
Վուրթգ բնչիվք մեծավ գնով,
Եթե վուչ փորվին Աստուծով,
Ի սպառ համառյաց {սառնություն տարածամ}։
4. «Դու, տեր աստված, տեսող ամեն բարի,
Շնչյա գիւորչազ գիւլափարի»
Ջիր մշչի ծոֆն սլոզ սառի,
Ի սպառ համառյաց {սառնություն տարածամ}։
5. Աղհաիվք սիրտք նուցա լցան,
Պարանուցք յիվ {հ}արիր փրեցան,
Ջի դրամք ի ծուցես տարեցան,
Ի սպառ պաշարյաց {սառնություն տարածամ}։
6. Թե աստված նուցա ոչ ոգնիր,
Մին ամիս և զգալուն աշեր,
Վրճարիլ հարցֆն վուչ վուք կարիր,
Ի սպառ համառյաց {սառնություն տարածամ}։
7. Հուրժամ այս ճարին պասահին,
Դոզան սիրտք նուցա առ այն,
Պայծառ անվանքն վուչ ես պահին,
Ի սպառ համառյաց {սառնություն տարածամ}։
8. Չախորդության ձայնին յիրփ հնչին,
Ապրանք նուցա վուչ ես մատչին,
Ուախին զլիուցն զիմաց փախին,
Ի սպառ պաշարյաց {սառնություն տարածամ}։

1 Տեր-Պետրոսի մասին տես E. Такайшвили. Описание рукописей, т. I, в. I—4, Тифлис, 1902—1904, стр. 692—693, т. II, стр. 340—341, 348. Լ. Մելիքսեթ-Քեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ, «Գեղարվեստ», VII, №, 1921, էջ 48։

V

Հովսեփ (Իսոփ) Տուլոսլի ոտանավորը Լ. Թաղաշվիլին այսպես է բնութագրում. «Армянское стихотворение грузинскими буквами Иосифа Тулоева на счет Цицианова (sic. Լ. Ի. Բ.)», որ համապատասխանում է բնաղբի հետևյալ ծանոթությանը. «Թքմուլի Իոսեփ Տուլոսլիօսագան Թախմիսիս խմաղեղ ծիցիանովգե (sic. Լ. Ի. Բ.)»: Ոտանավորը բաղկացած է 10 տունից՝ յուրաքանչյուրը 5 տող, ընդամենը 50 տող: Սա ևս զրարարախառն Թրիլիսիի բարբառով է հորինված:

Ահա և այդ ոտանավորը՝ ըստ № 1576 ա ձեռագրի. —

- | | |
|--|--|
| 1. Տասնուհինգ տարի հիվանդ իմ,
Ջանս քանդված փուլ ու փանդ իմ.
Պատճառ բարեկամերուն շանդ իմ.
Միշտ ուղում ին տունս քանդիմ.
Ուղում իմ հոբիս ավանդիմ: | 6. Ջիմ ճարում դոստուր ու ջարա,
Ջիգարս ունիմ փարա-փարա,
Մին գոմանից չում իմ, շարա.
Բարեկամին թամաշա արա,
Ամեն գոման ունիմ յարա: |
| 2. Միշտ ծառաութիւնս կասին,
Ամեն մարթ վրես կիսսին,
Անգաճ չեն անում սաղմոսին,
Ջարչբան Պետրոս-Պոպոսին.
Համփիրութիւն շանի քարոզեցին: | 7. Հիրու-մողիկ բարեկամին
Ջին տիսանում իրանց շահիրն,
Վուչ կարթում ին սրբուց դիրն,
Վիրչն լցուցին թարիղն.
Ման էին գալի ավարա: |
| 3. Մե մարթ չկա՝ դարդս ասիմ,
Տասնուհինգ մուխանբաղ կասիմ.
Ամենա[յ]ն լիղվից կիսսիմ.
Բախտս կորցցիլ իմ, սպաս իմ,
Կարողութիւնս հատիլ է: | 8. Վուր նա գրե դավթումն,
Դարդս մինչին իմանումն,
Թե կու խառնվիմ շանումն.
Մնում իմ չուրս մում անումն.
Դարիլ իմ նոքար ու նոքար: |
| 4. Գիշեր-ցերեկ շատ իմ յալի,
Միշտ դորչորս ման ին դալի.
Ուղում ին օսկորս էլ ծալի.
Մնացիլ իմ գարմանալի.
Ման իմ գալի դողդողալի: | 9. Ինչպես ննդա յիս էս տիղն,
Միրին բոնա ճնտիտվա նիղն,
Ջանեմես էլ քամին լիղն.
Թար շանց տան իմ գեթն ու միղն
էս ցավիւն ինձ տիղ ճարա: |
| 5. Օչով շոազդ դա էս ցավին
Սրփաղնի հիդ ննդա դիվան.
էսպես մարթուն վունց շապավին,
Փարվան դրում ին մովրավին
էլ չէ հարկն կիտկավին: | 10. Վուրին մե կավ էսպես վախ տան,
Ի հարկե ինձ կու քամբախտին,
Հաշա ին անում կանտրախ[տ]ին.
Հրաման դնաց նոաշախտին,
Տուլոսլին ոաղի արա: |

Л. М. Меликсет-Бек

Еще ряд образчиков произведений армянских поэтов XVIII—XIX вв. в грузинской транскрипции

(Материалы для истории тбилисского армянского диалекта)

Р е з ю м е

Армянские рукописные антологии в грузинской транскрипции, которые дошли до нас с XVIII—XIX вв., представляют интерес с двух точек зрения: а. по содержанию — как дополнения к известным из

разных рукописных собраний песенников, следовательно, и как материал для изучения поэзии и творчества ашугов в позднее средневековье; и *б. по языку*, как редчайшие памятники состояния в те века армянских диалектов в Грузии, в частности Тбилисского.

В дополнение к стихам в грузинской транскрипции, содержащимся в сборниках Саят-Новы (Ереван), Ивана Сеидова—сына Саят-Новы (Ленинград) и Степана Аламдарова (Тбилиси), нами публикуются 5 образчиков таковых же стихов, содержащихся в рукописях №№ 1576 а, 3683 и 3723 из коллекции б. Общества распространения грамотности среди грузинского населения, ныне Гос. Музея Грузии. Это—1. вариант песни Нагаш Ионатана (начала XVIII в.) „Паткир мы теса лусни нман“, 2. варианты песни Саят-Новы (середины XVIII в.) „Чис асум те лац ис эли“, 3. стихотворение Туринджа „Ов, им сирели, мек модс ари“, 4. стихотворение царевича Мириана Багратиона в армянском переводе тер-Петроса Тбилисского (конца XVIII в.) „Ов итис те и Аштархан“, и 5. стихотворение Иосифа Тулоова (начала XIX в.) „Таснуһниг тари һиванд им“.